ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5540-Ա « 13 » նոյեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱԳԾԵՐՆ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1. Անհետաձգելի համարել.

1) «Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը,

2) «Երևանի սոցիալական ծառայությունների կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը,

3) «Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/10 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով «Ասլենդ» ՓԲԸ-ին պատկանող հողամասը Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/10 հասցեին կից գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակությանը համաձայնություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը,

4) «Հաղթանակ 9-րդ փողոց 1-ին նրբանցք հ.1բ հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը,

5)«Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դրոյի փողոց հ.11/2 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ